



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅՈՎ ԶԲԱՂՎՈՂՆԵՐԻ
	ԲԺՇԿԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ԱՌԱՐԿԱ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ
ՀԵՂԻՆԱԿ	Արմեն Մաղաքյան Արշալույսի
ՄԱՐԶ	Արմավիրի մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Փարաքարի միջնակարգ դպրոց

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅՈՎ ԶԲԱՂՎՈՂՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ֆիզիկական դաստիարակությունը առանձնահատուկ տեղ ունի անձի ձևավորման, նրա ֆիզիկական ներդաշնակ զարգացման ապահովման, մտավոր առաջընթացի, բարոյականային, հոգեբանական որակների դաստիարակման և արժեքային համակարգի ձևավորման գործում:

Հանրակրթական դպրոցում ֆիզիկական դաստիարակության հիմնական նպատակը ֆիզիկապես առողջ, համակողմանի զարգացած, աշխատանքային գործունեությանը նախապատրաստված, առողջ ապրելակերպի կանոններին տիրապետող, արտակարգ իրավիճակներում կողմնորոշվող քաղաքացի ձևավորելն է:

Ֆիզիկական դաստիարակության գործընթացում խիստ կարևոր է սովորողների առողջական վիճակի և տարիքային զարգացման առանձնահատկությունները հաշվի առնելը:

Ֆիզիկական վարժությունների ազդեցությունը աճող օրգանիզմի վրա բարերար է լինում միայն այն դեպքում, երբ դրանք համապատասխանում են ինչպես ամբողջ օրգանիզմի, այնպես էլ նրա առանձին օրգան-համակարգերի հնարավորություններին:

Հայտնի է, որ երեխաների օրգանիզմի աճման ու զարգացման գործընթացը ընդհանում է անընդհատ, և միևնույն ժամանակ անհամաչափորեն:

Սովորողների յուրաքանչյուր տարիքային խումբ ունի իր աշխատունակության և ֆիզիկական զարգացման որոշակի մակարդակը, մտավոր գործունեության, կամային և հուզական գերիշխող հատկանիշները:

ՀՀ կառավարության որոշմամբ, հանրակրթական բոլոր հաստատություններում, ուսումնական տարվա սկզբին աշակերտները պետք է ենթարկվեն բժշկական հետազոտության և դրա արդյունքով բաժանվեն բժշկական խմբերի:

Ըստ առողջական վիճակի դպրոցականների բաժանումը բժշկական

խմբերի՝ նախատեսված է ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 22-ի թիվ 2353/ն որոշմամբ և ՀՀ առողջապահության նախարարի 2006թ սեպտեմբերի 22-ի N 1075/ն հրամանով:

Հանրակրթական դպրոցներում, յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին, առողջապահության ներկայացուցիչների (տարածքի պոլիկլինիկայի բժիշկների) և դպրոցի բուժանձնակազմի ուժերով անցկացվում է դպրոցականների առողջության և ֆիզիկական զարգացման վիճակի հետազոտություններ, որոնց ժամանակ մանրամասն ստուգվում են նրանց սիրտ-անոթային, շնչառական, նյարդային ու հենաշարժողական համակարգերը:

Ստուգումների արդյունքով դպրոցականները ըստ իրենց առողջական վիճակի, ֆիզիկական զարգացման, օրգանիզմի ֆունկցիոնալ և ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բաժանվում են բժշկական երեք խմբերի՝ հիմնական, նախապատրաստական և հատուկ:

Բժշկական հիմնական խմբում ընդգրկվում են այն դպրոցականները, որոնք առողջ են, ունեն շարժողական հնարավորությունների ու ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության բավարար մակարդակ:

Բժշկական նախապատրաստական խմբում ընդգրկվում են այն դպրոցականները, որոնք ունեն առողջական վիճակում որոշ շեղումներ, ֆիզիկական զարգացման ու շարժողական հնարավորությունների միջինից ցածր ցուցանիշներ:

Հատուկ բժշկական խմբում ընդգրկվում են այն դպրոցականները, որոնց առողջական վիճակում կան մշտական կամ ժամանակավոր բնույթի նշանակալից շեղումներ, հիմնականում սրտանոթային, շնչառական համակարգերի, և որոնց համար հակացուցված է ֆիզիկական կուլտուրայի պետական ծրագրով նախատեսված վարժությունները:

Հիմնական և նախապատրաստական խմբերում ընդգրկված դպրոցականների համար պարտադիր է մասնակցությունը ֆիզիկական կուլտուրայի դասերին և ցանկալի է ընդգրկումը ֆիզիկական

կուլտուրայի և սպորտի արտադասարանական միջոցառումներին ու պարապմունքներին:

Հատուկ բժշկական խմբերի հետ պարապմունքները անցկացվում են «Ֆիզիկականկուլտուրա Հատուկ բժշկական խմբեր»ի ծրագրով (2011 թ), վերապատրաստում անցած ուսուցիչները, ինչպես նաև հատուկ պատրաստություն ունեցող բուժաշխատողների կողմից:

Այսպիսով, դպրոցականներին համապատասխան բժշկական խմբերում տեղաբաշխումը հաշվարկելով, ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ ամբողջ ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքում իրականացվում է դիֆերենցված՝ տարբերակված մոտեցումով:

2. ՀԱՏՈՒԿ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՄԲԵՐ

Հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների ֆիզիկական կուլտուրայի խնդիրներն են՝

- սովորողների առողջության ամրապնդում,
- հիվանդությունների հետևանքով թուլացած օրգանների և համակարգերի ֆիզիոլոգիական ակտիվության բարձրացում, մտավոր և ֆիզիկական աշխատունակության բարձրացում,
- ֆիզիկական զարգացման բարելավում, ֆունկցիոնալ շեղումների կամ թերությունների շտկում, օրգանիզմի կոփում,
- հիմնական շարժողական ունակությունների և հմտությունների զարգացում,
- ճիշտ կեցվածքի ձևավորում, հարթաթաթության կանխում,,
- ճիշտ շնչառության ուսուցանում, օրգանիզմի պաշտպանական ֆունկցիաների և դիմադրողականության բարձրացում,
- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, անձնական հիգիենայի, կոփման կանոնների, օլիմպիական խաղերի, հաշմանդամների սպորտի, ինքնավերահսկողության , ինքնուրույն հիգիենիկ մարմնամարզությամբ զբաղվելու գիտելիքների ձեռքբերում,
- բարոյականային որակների դաստիարակում և ինքնուրույն պարբերաբար ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու ցանկության ձևավորում,
- հոգեբանական բարդություններից ձեռքազատում:

Հանրակրթական դպրոցում հատուկ բժշկական խմբերի կոմպլեկտավորումը իրականացվում է հաշվի առնելով դպրոցականների հիվանդության բնույթը, ֆիզիկական զարգացումը և ֆունկցիոնալ վիճակը:

Մեկ խմբում կարող են ընդգրկվել են երկուսից չորս դասարանների դպրոցականներ, օրինակ՝ **1-4-րդ, 5-7-րդ, 8-9-րդ, 10-12- րդ** դասարանները:

Հաշվի առնելով բժշկական ցուցումները, ֆիզիկական զարգացման սվյալները և ֆիզիկական պատրաստությունը հատուկ խմբերը պետք է բաղկացած լինեն **մեկ ուսուցիչ՝ 7-10 աշակերտ հարաբերությամբ:**

Հատուկ բժշկական խմբերում անցկացվող դասերը /պարապմունքները/ պետք է նպաստեն սովորողների առողջության ամրապնդմանը, հիվանդություններից առաջացած խանգարումների շտկմանը, շարժողական ընդունակությունների մշակմանը, ինքնուրույն ֆիզիկական վարժություններ կատարելու կարողության ձևավորմանը և կամային հասկությունների դաստիարակմանը:

Պարապմունքների ժամանակ ուսուցիչը պետք է հաշվի առնի սովորողների տվյալ համակազմի /կոնտինգենտի/ օրգանիզմի հետևյալ առանձնահատկությունները՝ ցածր շարժողական պատրաստականությունը, ֆունկցիոնալ հնարավորությունների ցածր մակարդակը և ֆիզիկական բեռնվածության հանդեպ ցածր հարմարվողականությունը:

Հատուկ բժշկական խմբերի ֆիզիկական կուլտուրայի դասերն ու պարապմունքները պետք է կառուցել ներգրավիչ, հիմնական և եզրափակիչ մասերով:

Այդ մասերի բաղադրությունը և տևողությունը համեմատած սովորական դասերի և պարապմունքների հետ ունեն որոշակի առանձնահատկություններ:

Ներգրավիչ մասի խնդիրներն են՝ նախապատրաստել սովորողներին, որոշել ՄԿՀ-ն (սրտամկանի կծկումների հաճախականությունը), պատկերացում կազմել նրանց ինքնազգացողության մասին, ծանոթացնել դասի կամ պարապմունքի բովանդակությանը, ստեղծել բարենպաստ հուզական միջավայր, տրամադրություն, նպաստել հետագա ծանրաբեռնվածությանը օրգանիզմի աստիճանական, ֆունկցիոնալ պատրաստությանը:

Ներգրավիչ մասը խորհուրդ է տրվում բաժանել ներգրավիչ և նախապատրաստական մասերի:

Ներգրավիչ /3-5 րոպե/ մասում հաշվարկվում է սրտի զարկերի հաճախականությունը և կատարվում են շնչառական վարժություններ: Նախապատրաստական մասում /10-15 րոպե/ տրվում են հիմնականում ընդհանուր զարգացնող վարժություններ, որոնք կատարվում են դանդաղ և

միջին տեմպով:

Հիմնական մասի խնդիրներն են՝ սիրտ-անոթային, շնչառական համակարգի և ամբողջությամբ վերցրած, օրգանիզմի ընդհանուր ներդաշնակ ու հատուկ զարգացումը, շարժողական ընդունակությունների մշակումը, բարոյականային հատկությունների դաստիարակումը:

Հիմնական մասում սովորողները յուրացնում են հիմնական շարժողական ընդունակությունները: Այս մասում լուծվում են մկանային համակարգի ընդհանուր զարգացման, շնչառության և արյան շրջանառության բարելավման, ճիշտ կեցվածքի ձևավորման, ինչպես նաև կամային որակների դաստիարակման խնդիրները:

Դասի, պարապմունքի հիմնական մասի սկզբում նպատակահարմար է օգտագործել հավասարակշռության պահպանման վարժություններ, աթլետիկական վարժությունների առանձին տարրեր և այլն: Շարժախաղեր և մարզախաղերի տարրերի կատարման ժամանակ, սովորողի օրգանիզմը արձագանքում է սրտի կծկումների արագացված հաճախականու-թյամբ, զարկերակային ճնշման բարձրացմամբ: Որպես կանոն, սիրտ-անոթային համակարգի աշխատանքի և զարկերակի ճնշման ցուցանիշները դանդաղորեն վերադառնում են նորմային: Դրա համար շարժախաղեր և մարզախաղերի տարրեր անցկացնելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել և դրանից անմիջապես հետո անցկացնել դանդաղ քայլք, շնչառական վարժություններ, հանգիստ՝ նստած վիճակում, 1 րոպեից ոչ պակաս:

Դասերի, պարապմունքների ընթացքում տրվող ընդհանուր զարգացնող վարժությունները ոչ միայն հենաշարժողական համակարգի զարգացման ու ամրապնդման լավագույն միջոց են, այլ նաև գեղեցիկ շարժվելու ունակության դաստիարակելու լավագույն միջոց, որոնք բարելավում են շարժումների ընդհանուր կորդինացիան:

Կարևոր է նաև դպրոցականներին սովորեցնել թուլացնել մկանները, այն անհրաժեշտ է շարժումների խնայողաբար, նպատակահարմար կատարելու համար:

Հիմնական մասի տևողությունը տատանվում է 20-25 րոպե:

Եզրափակիչ մասի խնդիրներն են՝ ներգործել վերականգնող գործընթացների արագ ընթացքին, ծանրաբեռնվածության իջեցմանը, հոգնածության վերացմանը: Եզրափակիչ մասում նպատակահարմար է կիրառել պարզ վարժություններ ձեռքերի համար, դանդաղ քայլք, պարային քայլեր, մկանների թուլացման վարժություններ, շնչառական վարժություններ: Պարտադիր է նստած վիճակում հանգիստը: Եզրափակիչ մասը տևում է մոտավորապես 5-7 րոպե:

Հատուկ բժշկական խմբերի դասերը, պարապմունքները անցկացնելիս պետք է ղեկավարվել տարբերակված մոտեցման սկզբունքով, և ծանրաբեռնվածությունը բաշխել ըստ դպրոցականների անհատական առանձնահատկությունների:

Հատուկ բժշկական խմբերի դասերի, պարապմունքների հուզական վիճակը կախված է շատ գործոնները՝ դահլիճի լուսավորվածությունը և մաքրությունը, մարզագործիքների վիճակը, պարապողների արտաքին տեսքը, ուսուցչի մատչելի բացատրությունները, հետաքրքիր, պատկերավոր զգուշացումը, մեթոդական ցուցումները, երաժշտության ուղեկցությունը և այլն:

Դասերի, պարապմունքների ժամանակ ուսուցիչը պետք է պահպանի չափի որոշակի զգացում, քանի որ ավելորդ գրգռվածությունը անբարենպաստ ազդեցություն է գործում սովորողների վրա, առաջացնում նյարդային և ֆիզիկական գերլարվածություն:

Հատուկ բժշկական խմբերի պարապմունքները ավելի արդյունավետ կլինեն, եթե անցկացվեն բացօթյա, ինչը նպաստում է նրանց կոփմանը և առողջացմանը:

Առաջին 6-8-րդ շաբաթների պարապմունքներին աշակերտների հետ անհրաժեշտ է կիրառել հատուկ վարժություններ / ցուցված կոնկրետ հիվանդության համար/, որոնք պետք է հիսմակցվեն ընդհանուր զարգացնող վարժությունների հետ:

Պարապմունքների ժամանակ շարժողական գործողությունների ուսուցման և ընդունակությունների մշակման հետ մեկտեղ ուսուցիչը պետք է աշակերտներին անհրաժեշտ գիտելիքներ հաղորդի օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի, կոփման, ճիշտ շնչառության մասին:

Պարապմունքի ընթացքում ուսուցիչը պետք է հսկի դպրոցականների ինքնազգացողությունը ելնելով արտաքին ցուցանիշներից և սրտի կծկումների հաճախականությունից (պուլս), սովորեցնի ինքնահսկողությանը:

Աշակերտների բժշկական մի խմբից մյուսը փոխադրումը կատարվում է բժշկի հերթական կամ լրացուցիչ հետազոտության արդյունքից հետո:

Ֆիզիկական կուլտուրայի դասերից ժամանակավոր ազատումը կատարվում է միայն բժշկի թույլտվությամբ:

3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅՈՎ ԶԲԱՂՎՈՂՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ

ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ֆիզիկական կուլտուրայով զբաղվողների բժշկական հսկողությունը իր մեջ ընդգրկում է.

- սովորողների առողջության և ֆիզիկական զարգացման վիճակի պարբերական ստուգում,
- բժշկամանկավարժական դիտումները,
- մարզական կառույցների սանիտարահիգիենիկ հսկողությունը,
- վնասվածքների կանխարգելումը:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը պետք է իմանա, որ դասերի ընթացքում հնարավոր է սովորողների զարկերակային ճնշման բարձրացում, հետևաբար պետք է հաճախակի կատարել զարկերակային ճնշման չափում, նույնիսկ դպրոցական բժշկի բացակայության դեպքում, այն կարող է կատարել ուսուցիչը:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչին անհրաժեշտ է իմանալ նաև սովորողների անցկացրած հիվանդություններից հետո դասերի և պարապմունքների վերսկսման ժամկետները, որոնք սահմանում է բժիշկը:

Դպրոցականների առողջության և ֆիզիկական զարգացման վիճակի պարբերական ստուգումները կատարվում են դպրոցի բժշկի կամ բուժքրոջ կողմից: Որպես ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշներ ընտրվում են սովորողի հասակը, քաշը և կրծքավանդակի շրջագիծը:

Բժշկամանկավարժական հսկողությունը հանդիսանում է դպրոցականների ֆիզիկական դաստիարակության նկատմամբ հսկողության կարևոր բաժինը:

Այն իրականացվում է մանկավարժական դիտարկումների միջոցով:

Դիտարկումների հիմնական նպատակն է նպաստել դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացի բարելավմանը և ֆիզիկական կուլտուրայի դասերի և պարապմունքների ընթացքում առավելագույն առողջարար արդյունք ստանալուն:

Դիտարկումներն ուղղորդված են ֆիզիկական կուլտուրայի դասերի և պարապմունքների կառուցվածքի, սովորողի առողջական վիճակի հետ կապված բեռնվածության ծավալի ընտրության ճշտության, նրանց ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության մակարդակի գնահատմանը:

Մանկավարժական դիտարկումները կատարում է դպրոցական բժիշկը, որի միջոցով վերահսկվում է ֆիզիկական կուլտուրայի դասերի ֆիզիկական բեռնվածությունը, գնահատվում է դրա ազդեցությունը դպրոցականի օրգանիզմի վրա, ինչպես նաև ֆիզիկական բեռնվածության համապատասխանությունը նրանց տարիքային և սեռային առանձնահատկություններին, ֆիզիկական զարգացմանն ու շարժողական հնարավորություններին:

Դիտումների ժամանակ հաշվի է առնվում նաև սովորողների ինքնազգացողությունը, հոգնածությունը:

Դիտումները կարող են լինել ընդհանուր բնույթի կամ որևէ հարցի վերաբերյալ: Օրինակ, անհրաժեշտ է որոշել աշակերտների օրգանիզմի հարմարվողականությունը արագաշարժության և ուժային վարժություններին:

Այդ նպատակով դասի սկզբին, չափում են 4-5 աշակերտների զարկերակի և շնչառության հաճախությունը, արյան ճնշումը: Այնուհետև, նույն չափումները կատարում ենք դասի ներգրավիչ, հիմնական, եզրափակիչ մասերում: Դասի ավարտից 10-15 րոպե հետո չափում ենք նույն աշակերտների զարկերակի և շնչառության հաճախությունը: Այդ տվյալների հիման վրա կազմվում է դասի ֆիզիոլոգիական գծանկարային կորը, հաշվում են նաև բեռնվածության խտության տոկոսը, որոշվում է, թե որքանով է օրգանիզմի ռեակցիան համարժեք կատարվող աշխատանքին:

Դիտումների արդյունքները վերլուծվում և քննարկվում են ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի հետ և կատարվում են համապատասխան եզրահանգումներ: Ֆիզիկական կուլտուրայի դասերի ժամանակ անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել սովորողների ճիշտ, արդյունավետ, համաչափ և

խորը շնչառության դրվածքին: Քանի որ, ճիշտ և համաչափ շնչառությունը օրգանիզմը ապահովում է անհրաժեշտ թթվածնով, դրական է ազդում շնչառական, արյան շրջանառությանը, օրգաններին և ընդհանրապես ամբողջ օրգանիզմի զարգացման վրա:

Սովորողների ֆիզիկական դաստիարակության գործընթացը իրականաց-նելիս՝ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը պարտավոր է.

- ամբողջ ուսուցման ընթացքում հետևել սովորողների առողջական վիճակին և ֆիզիկական զարգացմանը,
- դասերն անցկացնել այնպիսի տեղանքում և այնպիսի մարզագույքի ու սարքավորումների օգտագործմամբ, որոնք համապատասխանում են սանիտարահիգիենիկ պահանջներին,
- ճիշտ օգտագործել մարզագույքը,
- ապահովել դասերի և պարապմունքների անվտանգությունը:

Դպրոցներում պետք է կատարվի նաև մարզական կառույցների սանիտարահիգիենիկ հսկողություն, այսինքն պետք է ստուգել մարզադահլիճների և մարզահրապարակների չափերի համապատասխանությունը, մաքրությունը, օդափոխությունը, մարզական գույքի, հանդերձանքի վիճակը, մաքրությունը և այլն:

Եզրակացություն

Ելնելով վերոհիշյալ թեմայից՝ «Ֆիզիկական կուլտուրայով զբաղվողների բժշկական հսկողությունը»», հանգում եմ հետևյալ եզրակացությանը՝ թեման բովանդակալից է, ուսուցանող, մեթոդապես հարուստ և նորություններով լի:

Իրոք որ բժշկական հսկողությունն անհրաժեշտ է ֆիզկուլտուրայի դասերին: Երեխաների աճող ու զարգացող օրգանիզմին անհրաժեշտ է լինել ուշադիր և հետևողական: Տեսական գիտելիքները, տեղեկությունները կարևորում են ուսուցման ընթացքում՝ զրույցի ձևով:

Խելամտորեն պետք է մոտենալ օրվա ռեժիմին, հագեցնել շարժումների այնպիսի քանակ, որն ապահովի շարժողական ակտիվության անհրաժեշտ ծավալ: Թեմայում կարևորվում է նաև դահլիճի լուսավորվածությունը և մաքրությունը, ուսուցչի պարզ ու հակիրճ բացատրությունները, վարժությունների կատարումը երաժշտության ուղեկցությամբ և այլն:

Լավ է, որ անհրաժեշտ տեղ է հատկացված նաև խաղերին, Օլիմպիական խաղերի և աշխարհի չեմպիոնների մասին մատչելի պատմություններին, որոնց երեխաները մեծ հաճույքով են լսում:

Կիրառելով թեմայում արձարծված այս և նման հարցերը, ֆիզկուլտուրայի դասերը կանցնեն հետաքրքիր, նպատակային և կծառայեն աշակերտների ճիշտ, առողջ կեցվածքի ձևավորմանը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Յու. Գրիգորյան, Հ. Մինասյան «Ֆիզիկական կուլտուրա չափորոշիչներ և ծրագրեր 19րդ դասարաններ: 2012 թ.
2. Հ. Հ. Գաբրիելյան և ուրիշներ «Հանրակրթական դպրոցի հատուկ բժշկական խմբերի ծրագիր 112րդ դասարաններ»: 2011 թ.
3. Հ. Հ. Գաբրիելյան և ուրիշներ «Ֆիզիկական կուլտուրա հատուկ բժշկական խմբեր 1-12-րդ դասարաններ» ՈԻսուլցի ձեռնարկ 2013 թ.
4. Հ. Ս. Մինասյան, Հ. Հ. Գաբրիելյան «Գիտելիքների հիմունքներ 1-12-րդ դասարաններ»: ՈԻսուլցի ձեռնարկ 2011 թ.